Հաստատում եմ՝
Հյուսիսային համալսարանի
ռեկտոր՝ Մ.Մակիչյան
"14" հունվարի 2026թ

Հաստատված է համալսարանի
Գիտխորհրդի 2025թ. հունվարի 14-ի
որոշմամբ (արձ. № 8 )

# ԿԱՐԳ
# ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՔՈԼԵՋԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՄԱՆ

Երևան 2025թ.

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կարգը սահմանում է Հյուսիսային համալսարանի քոլեջի (այսուհետ՝ Քոլեջ) դասախոսական կազմի, մանկավարժական կազմի, ուսումնաօժանդակ անձնակազմի, վարչատնտեսական անձնակազմի խրախուսման կարգն ու պայմանները:

1.2. Աշխատողների խրախուսման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ, ինչպես նաև այլ նորմատիվ իրավական ակտերով, Հյուսիսային համալսարանի ռեկտորի հրամաններով և սույն կարգով:

1.3. Սույն կարգի նպատակն է խրախուսման համապատասխան ձևերի միջոցով խթանել Քոլեջի աշխատակազմի կայունության ապահովմանը, վարչատնտեսական, ուսումնաօժանդակ և մանկավարժադասախոսական անձնակազմի կողմից աշխատանքների պատշաճ իրականացմանը և արդյունավետության բարձրացմանը:

1.4. Սույն կարգով սահմանվում է նաև Քոլեջի աշխատողների խրախուսման սկզբունքները, տեսակները, հիմքերը, պարբերականությունը, ինչպես նաև կանոնակարգում է խրախուսման ամբողջ գործընթացը:

1.5. Սույն կարգը տարածվում է Քոլեջի ինչպես հիմնական, այնպես էլ համատեղությամբ աշխատողների վրա:

1.6. Խրախուսման հիմնական սկզբունքներն են՝

ա) արդարությունը.

բ) պատճառաբանված լինելը.

գ) խտրականության ցանկացած դրսևորման անթույլատրելիությունը:

## 2. ԱՇԽԱՏՈՂԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

2.1.Քոլեջում կիրառվում են խրախուսման հետևյալ ձևերը.

ա) շնորհակալության հայտարարում,

բ) միանվագ դրամական պարգևատրում,

գ) հուշանվերով պարգևատրում,

դ) լրացուցիչ վճարովի արձակուրդի տրամադրում՝ ուսումնական գործընթացից դուրս ժամանակահատվածում,

2.2. Խրախուսում կիրառելու հստակ կանոնակարգված պարբերականություն չի սահմանվում: Սույն կարգի 2.1. կետի բ ենթակետով նախատեսված խրախուսման ձևը կարող է կիրառվել ամսական, եռամսյակային, կիսամյակային պարբերականությամբ կամ մեկանգամյա կիրառման ձևով:

2.3. Սույն կարգի 2.1. կետի ա ենթակետով նշված խրախուսման դեպքում աշխատողին տրվում է ռեկտորի ստորագրությամբ և կնիքով վավերացված շնորհակալագիր:

2.4. Սույն կարգի 2.1. կետի բ ենթակետում նշված խրախուսման դեպքում աշխատողին տրվող միանվագ դրամական պարգևատրումը որոշվում է Քոլեջի Կառավարման խորհրդում հաստատված չափաքանակով: Միանվագ դրամական պարգևատրումը տրվում է ՀՀ դրամով:

2.5.Սույն կարգի 2.1. կետի գ ենթակետով նշված խրախուսման դեպքում աշխատողին հուշանվերով պարգևատրման դեպքում հուշանվերի գումարի չափը որոշվում է Քոլեջի Կառավարման խորհրդում :

2.6.Սույն կարգի 2.1. կետի դ ենթակետով նշված խրախուսման դեպքում աշխատողին տրամադրվող լրացուցիչ վճարովի արձակուրդի տևողությունը չի կարող գերազանցել՝ 3 աշխատանքային օրը:

## 3. ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

3.1. Աշխատողների խրախուսման համար հիմք է հանդիսանում՝

3.1.1. Ռազմավարական առաջնահերթությունների ապահովման նպատակով որակի բարելավման նախաձեռնություններին մասնակցությունը,

3.1.2.գիտամեթոդական, գիտահետազոտական կամ ստեղծագործական ակտիվ գործունեությունը, առանձնահատուկ ուշադրություն դարձնելով տեղական և միջազգային պարբերականներում, հանդեսներում և գիտական ամսագրերում հոդվածների հրապարակումը, գիտաժողովների մասնակցությունը,

3.1.3. աշխատանքային կարգապահությունը,

3.1.4.սովորողների կրթական առաջընթացը և ձեռքբերումները,

3.1.5. ուսանողների կողմից դասախոսների/մանկավարժների դասավանդման արդյունավետության գնահատման արդյունքները,

3.1.6. ուսումնական գործընթացում նորարարությունների ներդրումը,

3.1.7. Քոլեջում աշխատանքային գործունեության /աշխատանքային ստաժի/ տևողությունը:

## 4. ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ.

4.1.Ըստ անհրաժեշտության Քոլեջի մանկավարժական խորհրդում քննարկման է դրվում Քոլեջի աշխատողների խրախուսման հարցը, այնուհետև Քոլեջի տնօրենն ըստ վերադասության առաջարկ է ներկայացնում համալսարանի ռեկտորին՝ ներկայացնելով խրախուսում կիրառելու դեպքը և ձևը:

4.2. Մինչ խրախուսում կիրառելը համալսարանի ռեկտորի, Քոլեջի տնօրենի, մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի պետի մասնակցությամբ անցկացվում է համատեղ քննարկում՝ խրախուսման հիմքերն ուսումնասիրելու կապակցությամբ, անհրաժեշտության դեպքում համապատասխան ստորաբաժանումների ղեկավարներից պահանջելով սույն կարգին համապատասխան լրացուցիչ տվյալներ:

4.3.Քոլեջում խրախուսման ձևերը կիրառվում են համալսարանի ռեկտորի կողմից՝ համապատասխան հրամանով, որտեղ նշվում է խրախուսման ներկայացված աշխատողի խրախուսման ձևը, ամփոփ նկարագրվում են խրախուսման հիմքերը, անհրաժեշտության դեպքում կցելով համապատասխան փաստաթղթեր:

4.4. Խրախուսման համակարգի բարելավման նպատակով՝ պարբերական գնահատման և վերլուծության իրականացում՝ համադրելով այն աշխատակիցների հոսունության, գիտական հրապարակումների թվի աճի և աշխատակիցների բավարարվածության ցուցանիշների հետ:

## 5.ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1. Սույն կարգն ուժի մեջ է մտնելու 2025-2026 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակից :

5.2.Ուժը կորցրած ճանաչել Հյուսիսային համալսարանի Գիտխորհրդի 2022թ.-ի սեպտեմբերի «5»-ի որոշմամբ հաստատված «Հյուսիսային համալսարանի բժշկական քոլեջի աշխատակիցների խրախուսման կարգը»:

5.3. Սույն կարգը ենթակա է պարբերական վերանայման՝ բարելավման ծրագրերի, որակի ապահովման ներքին գործընթացների և արտաքին գնահատումների արդյունքների հիման վրա: